

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

The Armenian Inscriptions from the Sinai. Edited by Michael E. Stone. With Appendixes by Michel van Esbroeck and William Adler. Harvard University Press Cambridge, Massachusetts, IX + 197 p. + CXXIII Pl.

Սինայի թերակղզում հայերեն արձանագրությունների առկայության իրողությունը գիտական շրջաններին վերջնականորեն հայտնի դարձավ նորարար էպոս. Պողոթյանի «Սինայական արձանագրություն մը» հրատարակումով («Սինոս», 1966, էջ 538—539), թեև մինչ այդ համապատասխան գրականության մեջ կային փաստագրումներ, բայց՝ առանց վերձանության կամ րննության: Հաագիտությունը տեղականորեն գրադվել և գրաշվում է դեպի Պաղեստին կատարված ուղեորություններով և ուխտագնացություններով, մասնավորապես՝ «Հալո Երուսաղեմով», առ որը մոզո միջնադարյան վկայություններն ու նորօրյա կենդանի ապացույցները պատկառելի են: Պատմական աղբյուրները, սակայն, հիմք չէին տալիս մտածելու, թե հալոց միջալարում ոչ պակաս ճանաչում են ունեցել սուրբգրական Սինայի լեռն ու նրա ստորոտին գտնվող Ս. Կատարինի վանքը: Վիմագրական նշմարները ալո փաստի առաջին հուշոգները եղան և սակայն՝ հատուկնտ անձնանունների ընթերցումով անկարելի էր պատասխան տալ գիտական հարցասիրությանը: Ի ուրախություն հայագետարևելագետների, Սինայի հայերեն արձանագրությունների ուսումնասիրությանը ձեռնամուխ եղավ հայ թարգմանական մատենագրության հմուտ պատմաբան ու հրատարակիչ պրոֆ. Մալք է. Սթոունը: Այլևայլ գիտական կենտրոնների ու մշակութասատար կազմակերպությունների հոգածությամբ 1979—1980 թթ. նա միմյանց հաջորդող հինգ գիտարշավ է կազմակերպել և շուրջ քսան օր ղեկներել Սինայի անպատներում, հայտնաբերելով, իր իսկ խոսքերով՝ «հայերեն արձանագրությունների մինչև այժմ անձանոթ ու անպասելի մի հավաքածու»: Հասկանալի է, արձանագրությունները «հավաքածու» են դարձել գիտնականի աշխատասենյակում, իսկ իրականում գրանք փորագրված են Սինայի լեռ տանող և միմյանցից տասնյակ ու հարյուրավոր կիլոմետր հեռու գտնվող փորակներում, ժայռերի կողերին, անձավների մուտքերին և այլուր:

1979—1981 թթ. գիտական մամուլում երեկվացին պրոֆ. Մ. Սթոունի նախնական հաղորդումները իր գիտարշավների արդյունքների մասին (մեկ հոդված էլ տպագրվեց «Պատմաբանասիրական հանդեսում», 1981, № 4, էջ 88—94), իսկ ապա՝ լույս տեսավ գրախոսվող գիրքը, որ կատարված աշխատանքի լիակատար ամփոփումն է: Աշխատությունն ունի շուրջ հիմնական բաժին՝ հետազոտական (էջ 1—62), բնագրեր ու վերձանություններ (էջ 63—160), հավելվածներ, ուր ներկայացված են վրացերեն և լատիներեն արձանագրությունները (էջ 171—186) և աղյուսակներ (73 միավոր): Օժանդակ նյութերի շարքին պիտի դասել տեղանքին վերաբերող լուսանկարները (11 միավոր), օգտագործած գրականության մատենագիտությունը (էջ 187—191) և ցանկերը (էջ 152—170, 193—197):

Վիմագրագետի աշխատանքը երկու փուլ է ներառում՝ բնագրերի որոնում, ընդօրինակում ու լուսանկարում, ռսպ ապա՝ վերձանություն ու հետազոտություն: Հարկավ, հեղինակը չի կարծում, թե իրեն հաջողվել է երևան բերել պահպանված բոլոր վիմագրերն անխտիր (քսան օրում անկարելի է անպատի խուրթերն սպանել), բայց այլևս խոսք էարող է լինել միայն մասնակի լրացումներ մասին, այն էլ՝ եթե պարզվի, որ Սինայի լեռ տանող ուրիշ ճանապարհներ էլ են եղել: Արձանին պիտի հատուցել գիտնականին՝ հոգմահարված, պատասխանալի ու հագիվ նշմառելի տառահետքերով հայեակներ ճանաչելու և իմաստավորելու համար: Ինչ վերաբերում է վերձանելու, հնագործեն բնութագրելու և թվագրելու հմտությանը, ապա Մ. Սթոունը լիովին հաղթահարել է հայագիտության այդ բնագավառի ղովարությունները և իր նշանակալի ավանդը բերել վիմագրագիտությանը: Արդարացի է՝ ք նկատում նրա այն դիտարկումը, թե հիշատակագրողները պրոֆեսիոնալ գրիչներ չեն, ուստի տառածների մեջ առավել իշխողն ու գործածականը գրադարային տարբերակն է: Այդ գրույթը առավել հաստատուն կ'ներ՝ եթե նկատի առնվեին նաև Զվարթնոցի

ձեփերին եղած և վաղուց հրատարակված մակագրությունները, ինչպես նաև Դավիթ-Գարեշայի նյութերը: Վիմագրերի ժամանակագրական շրջանակները սահմանելիս հեղինակը գերազանցապես հնագրական, տեղագրական և պատմամշակութային իրողությունների վրա է հենվում, քանի որ ընգամենը երկու արձանագրություն է ստուգապես թվագրի: Կարծում ենք՝ էական փոփոխությունների ենթակա չպիտի լինի գրքում տրված ժամանակագրական խմբավորումը (էջ 16) VII դար.—S Arm 11, H Arm 64, VII—VIII դդ.—S Arm 17, H Arm 24, VII—IX դդ.—H Arm 34, 67, VIII դար.—H Arm 11, 14, VIII—IX դդ.—H Arm 55, 71, X դար.—H Arm 25, 31, 38, 45, 47, 52, 54, 58, 61, 62, 66, 72 և այլն: Այստեղից հետևող Կարևորագույն եզրակացությունն այն է, թե հայոց այցելությունը Սինա շարունակական ու ավանգական է եղել վաղ միջնադարից սկսած, և Մ. Սթոունը իրավացիորեն է շեշտում, թե հայերը առանձնակի եռանդ են ցուցաբերել ինչպես խմբային այցելություններ կատարելիս, անպես էլ այդ պարագան արձանագրի տեսքով հիշատակագրելիս: Ապագային է մնում պարզել, թե այդ հաճախակի այցելությունները չե՞ն հանգեցրել հայոց վանական հաստատության հիմնադրմանը, որպիսին կարող էր լինել և ավելի վաղ, ինչպես որ VII—VIII դդ. սկսած կար վրացական օջախ: Վերջինս զարմանալի արդյունավետության հասավ IX—X դդ., իսկ Դավիթ Շինարարի օրոք նոր եկեղեցի կառուցվեց: Համենայն դեպս՝ գեթ տեղի հունադավան մենաստաններում հայ միաբանների ներկայությունը հաղիվ թե կասկած հարուցի. Ս. Կատարինեի վանքի հայերեն ձեռագրերը (դրանց գոյությունը վկայել են Կոնդակովը, Յադարելին, Պմիտրիևսկին) գրիչներ ու ընթերցողներ պիտի ունենային: 1902 թ. Սինա այցելած Ն. Մառը հայերեն ձեռագրեր չի տեսել, բայց ենթադրել է, որ դրանք կարող էին լինել կառույցի նկուղներում կամ գանձատանը: Վրացական ձեռագրերի հավաքածուում նա նկարագրել է հայերեն մեկ զրչագիր (Դավիթ Անհաղթի գործերը) և երկաթագիր ու բոլորգիր թերթեր՝ վրացերեն ձեռագրերում իբրև կրկնագրի սկզբնական շերտ (տե՛ս նրա Предварительный отчет о работах на Синае. СПб., 1903, с. 11—12):

Կարճառոտ արձանագրությունները հնարավորություն չեն տալիս պարզելու հայաշխարհի ո՞ր հատվածից են միաբանողները: Բացի Ն. Պողարյանի ճշտած մեկ դեպքից, Մ. Սթոունը ծրուսաղեմից կամ այն այցելելուց հետո Սինա գալու ապացույց է համարում L Arm 3 արձանագրությունը, այն ընթերցելով Տե՛ս էր

[ՈՒՍԱՂԷՄ], բայց ստուգապես պետք էր կարդալ Մե՛ս էլ անձնանուն: Ճշգրտման կարոտ է ծրուսաղեմ ենթադրող մեկ այլ ընթերցում և՛ ե՛լ ԻԹ (H Arm 41), ուր «ի թուին» ենթադրելիք ևս չկա, այլ պարզապես՝ ե՛լ ԻԹ անձնանուն: Որտեղացի լինելու մի կարևոր հիշատակություն կա H Arm 71 վիմագրում, որ անձիտ բառաշատման հետևանքով չի նկատվել. ՄՈՒՍԷՍ ՊԱՏԱՅԻ ընթերցման երկրորդ մասը ոչ թե պատեմ/պատանամ բայն է (i circumvented), այլ Նպատ տեղանունը՝ ՄՈՒՍԷՍ ՆՊԱՏԱՅԻ (էջ 157):

Փորձություններով լի ճանապարհ անցնելու դժվարությունները լսելի են Մ. Սթոունի վերձանած արձանագրություններից մեկում՝ ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱՅ ԳԱՄԷՂԻ ԵՒ ԽՈՂԷԳՈՍԻ (S arm 9) և հմտորեն կոհնված, թե զամէղ-ն ու խողէգաւր անձնանունները չեն, այլ հունարեն *καταλος* (ուղտ) և *οδηγο;* (ուղեկցորդ) տերմինների գրադարձությունը: Եթե ինքնին հասկանալի էր, որ անապատները ուղտերով պիտի անցնեին, ապա դժվար էր կոհնել, թե ուղեկցորդները հույները պիտի լինեին, և ո՞չ արաբները:

Վաղ շրջանի հայկական միաբանական արձանագրություններում կանանց անուններ գրեթե չեն հանդիպում: Հաղիվ թե այս պարագան հնարավոր լինի բացատրել ուստավորների թվում նրանց իրական բացակայությամբ: Սինայի վիմագրերը լիովին հաստատում են ասվածը. այստեղ հիշատակված են Ադրիմէ, Քարանայ, Վաբաղալսա անձնանունները, որոնց կրողները, դատելով անվանակազմությունից, ազնվական ընտանիքներից պիտի սերած լինեն:

Վերջին տարիներս քանիցս առիթ է եղել նկատելու, թե դավանական հանդուրժողականությունը հայկական ավատատիրական հասարակության (և մատենագրության) կարևոր ինքնատիպություններից է: Եվ հիրավի, եթե ոչ Սինայի լեռ, ապա Ս. Կատարինեի վանք այցելելը ևս այդ է վկայում: H Arm 42 վիմագրում (էջ 132—133) նշված է «ի սուրբ Կատարինէ» գալը, իսկ առավել համոզիչ ապացույցը հիշյալ վանքի նշանավոր «Հուստինիանոսի դռների» վրա եղած հայերեն մակագրություններն են (S Arm 28—32): Քաղկեդոնական վանականությունը միաբանակ հայոց այսպիսի հիշատակագրություններ կարող էր հանդուրժել, հավանաբար, հատուցման որոշ պայմանով: Համադավանությունն այստեղ բավարար հիմք չէր, այլապես դուրը ծածկված պիտի լիներ հունարեն, լատիներեն, արաբերեն, վրացերեն և այլ մակագրություններով: Ուստի նորից պիտի պընդենք, որ երկարակ կառույցների վրա եղած

հայերեն արձանագրությունները ամենևին չեն պայմանավորված չիշյալ սրբարանների լքվածությամբ:

Սինայի նորահայտ արձանագրությունները նշանակալի նյութ են ընձեռում բարբառագիտությանը (վանխայր, Յոհնիկ, խողէգոս), անձնանվանարանությանը (Մաթի, Քաթ, Երամ, Գաղեն, Աղոտ և այլն), հնագրությանը (թեև գրչաճանկարները, ցավոք, հաճախ ստույգ չեն վերադարձրում լուսանկարներում եղած հնագրական ինքնատիպությունները): Բայց ամենակարևոր նորույթը հայկական միջնադարյան քաղաքակրթության և արևելյան քրիստոնյա աշխարհի շվիման նոր միջավայրի ու եզրերի բացահայտումն է՝ կարոտ հատուկ ուսումնասիրության: Արդյո՞ք հայերենի և հայերենից կատարվող թարգմանությունների նյութը ընտրելու և իրականացնելու օջախներից մեկն էլ Սինայն չէր:

Ի դեպ՝ ուրախալի է, որ Մ. Սթոունի գրքի հավելվածներից մեկը նվիրված է Սինայի վրացերեն արձանագրությունների հրապարակմանը՝

Միշել վան էսբրուքի աշխատասիրությամբ: Այն ևս կատարված է պատշաճ հետազոտությամբ, թեև առանձին սրբագրելիքներ կան: H Georg 3 կարդացված է շրջափակ շեփոկալը մեզքը Դափրից: Ողորմյա Դափր քագավորին, սակայն պիտի ուղղել՝ Դափր, Դափր: H Georg 7—տալո, շեփոկալը, շեփոկալը—Տեր, ողորմյա, ողորմյա, ուղղելի է՝ տալո, շեփոկալը շեփոկալը—Տեր, ողորմյա ժուլիլին: Կասկածելի է H Georg 9 երկու—պտուղ ընթերցումը: Թերևս Ե (ձ) Ե—հանի անհանուն կարելի էր կարդալ, իսկ H Georg 10-ի շեփոկալը մե շեփոկալը—ն պիտի ուղղել շեփոկ [չալը]— ողորմյա ինձ:

Վիճաբարագիտությունը, մասնագիտական հրատարակությունից բացի, մեծ նվիրում պահանջող բնագավառ է, առավել ևս Սինայի անապատներում աշխատելու համար: Պրոֆ. Մայքլ Սթոունը հերավի օժտված է այդ նվիրումով:

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ